ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԺՈՂՈՎԻ

Ա. ՆԻՍՏ

Ի 5-Ն ՀՈՒՆԻՍԻ 1954 ԱՄԻ

Ժողովն սկսավ հետ միջօրեի ժամը 2-ին, նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհուրդի նախագահող անդամ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի:

Ներկա էին՝

Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյան, Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ,

Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆյան, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդական տեղապահ,

Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյան, Շիրակի թեմի առաջնորդ,

Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան, նախկին առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի,

Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյան, Հարավային Ամերիկայի Կաթողիկոսական լիազոր պատվիրակ,

Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյան, Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանուց վերատեսուչ և Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ,

Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան, Մայր Աթոռ եպիսկոպոս, որպես Կոստանդնուպոլսո Պատրիարքության ներկայացուցիչ,

Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան, Ռումանահայ թեմի առաջնորդ,

Տ. Վարդան ծայրագույն վարդապետ Տեր-Սահակյան, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի միացյալ թեմի առաջնորդ,

Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ, որպես ներկայացուցիչ Երուսաղեմի Պատրիարքական Աթոռի,

Տ. Շավարշ վարդապետ Գույումճյան, Դամասկոսի թեմի Կաթողիկոսական փոխանորդ,

Պ. Ստեփան Կամսարական, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ,

Պ. Մինաս Մինասյան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ,

Նախքան ժողովի սկսիլը, երջանկահիշատակ Տ. Գեորգ Կաթողիկոսի համար կատարվեցավ հոգեհանգստյան աղոթք, որմե ետք նախագահ սրբազանը կարճ խոսքերով ներկայացուց այն մեծ ծառայությունը, զոր Նորին Սրբությունը մատուցած էր Իր Եկեղեցիին, Ազգին ու Հայրենիքին: Ապա Տ. Վազգեն սրբազան առաջարկեց հետևյալ մաղթանքը, որ միաձայնությամբ ընդունվեցավ ժողովականներուն կողմե.



ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԺՈՂՈՎԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՈՒՄ

«Սիրելի՛ սրբազան հայրեր և ժողովականներ.

Երջանկահիշատակ Գեորգ Զ. Ամենայն Հայոց հանգուցյալ Հայրապետը, ինչպես հայտնի է, քաջ գիտնալով և շարունակ աչքի առաջ ունենալով հավանական ընդհանուր պատերազմի մը արհավիրքներուն ահավոր հետևանքները ամբողջ աշխարհի և հատկապես մեր բազմաչարչար հայ ազգին համար, Իր կյանքի գործերեն մին ըրած էր, և անձնվիրաբար աշխատած էր՝ տարածել ու զորացնել, ուր որ Իր ձայնը կհասներ՝ խաղաղության, ժողովուրդներու միջև համերաշխության և փոխադարձ հասկացողության ոգին, որպեսզի աշխարհի մեջեն վերնա ատելությունը և տիրեն սերն ու փոխադարձ հարգանքը: Որպես քաջ և բարի Հովվապետ՝ դարեր շարունակ խաղաղություն քարոզող Հայաստանյայց Եկեղեցվույն, մեր երջանկահիշատակ Հայրապետը հետևած է մեր Տիրոջ և Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, որ իրեններուն պատվիրեց ըսելով՝ «Զխաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ», և մեծ առաքյալին, որ կըսե՝ «Զխաղաղութեան զենետ երթայք»:

Մենք ևս, սիրելի՛ սրբազան հայրեր, այս պահուս, երբ ի մի խմբված ենք մեր պաշտոնին պարտականության կատարման համար, և մեր հանգուցյալ Հայրապետին բարձր հիշատակին հարգանք կմատուցանենք, միաժամանակ աղոթել պարտինք ի սրտե և մաղթել՝ որ հրեշտակներու բերնով երկինքեն եկած պատգամը՝ «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն» իրագործվի մեր այս տագնապալի ժամանակներուն, աշխարհի բոլոր մեծ ու փոքր ազգերու մեջ, ի փառս Աստուծոյ և հերջանկություն և ի բարություն համայն մարդկության:

Աղոթենք և գործենք այս մտադրությամբ, և թող աղոթե բոլոր ազգերու հետ նաև հայ ժողովուրդը, որ Տերը այցելե Իր ստեղծվածներուն և փրկե զանոնք միջազգային ատելության և պատերազմի մահասփյուռ զենքերու չարիքներեն. ամեն»:

Ժողովը, քննելով ներկայացված խնդիրները, հաստատեց հետևյալ օրակարգը.

1. Ի Տեր հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կտակ-կոնդակը ամենապատիվ Տ. Տեղակալի մասին.
2. Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներու կազմը լրացնելու մասին.
3. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո միասնականության հետագա ամրապնդման մասին:

1. Ի Տեր հանգուցյալ Վեհափառ Հայրապետը 1954-ի ապրիլ 30-ի սրբատառ կոնդակով Տեղակալ կնշանակեր Երուսաղեմի Պատրիարքության Տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը: Եղիշե սրբազան Գերագույն Հոգևոր Խորհուրդին ուղղած հեռագրով կիմացներ, թե հազիվ հունիսի 10-ին կրնար Բոմբեյեն Երուսաղեմ մեկնիլ:

Նկատելով, որ իր Մայր Աթոռ ժամանումը կրնա ուշանալ, ժողովը տվավ հետևյալ որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 1954 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԻ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի կամքը Կաթողիկոսական Տեղապահ նշանակելու Երուսաղեմի Պատրիարքական Տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, որն արտահայտված է Նրա սույն թվականի ապրիլի 30-ին գրած սրբատառ կոնդակում, սուրբ է մեզ համար: Մենք սպասում ենք, որ Եղիշե սրբազանը բարեհաճի գալ Էջմիածին և անցնել իր պարտականությունների կատարմանը:

2. Սակայն, ի նկատի ունենալով, որ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի ժամանումն ուշանում է, իսկ Մայր Աթոռի աշխատանքները անհրաժեշտ է անխափան շարունակել, ուստի և անհրաժեշտ ենք համարում Մայր Աթոռի և Կաթողիկոսության գործերի կառավարումը հանձնել Ս. Էջմիածնի միաբանության ավագագույն անդամ և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսին, մինչև Եղիշե սրբազանի ժամանումը:

3. Ելնելով հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կամքից, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տեր-

տերյանը Տեղակալի պարտականությունների մեջ կարող է մտնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին տեղափոխվելուց հետո միայն:

2. Գերագույն Հոգևոր Խորհուրդի կազմը ամբողջացնելու հարց:

Նկատելով, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներեն ոմանք վախճանած են և այժմ Գերագույն Հոգևոր Խորհուրդի վրա ծանր պարտականություններ կիյնան մինչև Տեղակալի ժամանումը, ինչպես նաև անոր օգնելու և կազմակերպելու ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, կատարելով նաև Վեհափառ Հայրապետի կամքը, ժողովը որոշեց լրացնել ժամանակավորապես Գերագույն Հոգևոր Խորհուրդի ներկա կազմը հետևյալ երեք անդամներով.

Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան,
Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան,
Պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյան (հայրենադարձ մտավորական):

3. Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո միասնականության ամրապնդման հարց:

Նկատելով, որ Հայոց Եկեղեցին մի է իր նվիրապետական բոլոր Աթոռներով և նկատելով, որ միության և փոխադարձ սիրո մեջ կկայանա մասնավորաբար Մայրենի Ս. Եկեղեցվո պայծառացումն ու զորացումը, և նկատելով, որ դարերու ընթացքին ինչպես և այժմ նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդիսացած է և կհանդիսանա բովանդակ Հայ Եկեղեցվո գոյության պատվանդանը, ժողովականք, ազգային սուգի այս օրերուն, որոշեցին կոչ բանաձևել, հիմք ունենալով Գերագույն Հոգևոր Խորհուրդի ներկայացուցած ստվերագիրը և ներկայացնել ժողովի հաջորդ նիստին, որ տեղի պիտի ունենա հունիսի 7-ի առավոտյան ժամը 10-ին: Կոչ-ստվերագրի պատրաստությունը հանձնվեցավ Տիրան, Դերենիկ սրբազաններու և Պ. Մինաս Մինասյանի, նախագահությամբ Տ. Խաչ սրբազանի:

Ժողովը փակվեցավ կեսօրե վերջ ժամը 4-ին:

Բ. ՆԻՍՏ

Ի 7-Ն ՀՈՒՆԻՍԻ 1954 ԱՄԻ

Տեղի ունեցավ Վեհարանի դահլիճին մեջ երկուշաբթի կեսօրեն առաջ ժամը 11-ին, նախագահությամբ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի:

Կարդացվեցավ նախորդ նիստի ատենագրությունը և վավերացվեցավ:

Այնուհետև ներկայացվեցավ հանձնաժողովի պատրաստած կոչ-ստվերագիրը և պարբերություն առ պարբերություն քննելե և որոշ ուղղումներ կատարելե վերջ, հաստատվեցավ ժողովականներու կողմե:

Ժողովը փակվեցավ ժամը 2-ին նախագահ սրբազանի հոգեհանգստյան աղոթքով և պահպանիչով:

(Ստորագրություններ)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՇԱՎԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆ
ԽԱՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈԼԱՏՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ
ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ